ՆՎԻՐՎԱԾ ՎԱԶԳԵՆ ՎԵՀԱՓԱՌԻ ՀԻՇԱՏԱԿԻՆ

Ի հիշատակ Վազգեն Առաջինի վախճանման տասնամյակի, լրագրող Սիլվա Սուքիասյանն ի մի է հավաքել և առանձին գրքով հրատարակել Հայոց Հայրապետական Աթոռի 130-րդ գահակալի մասին տարբեր տարիներին գրված իր հոդվածները՝ դրանք զետեղելով «Մի դափնեճյուղ Վազգեն Ա-ի հիշատակին» խորագրի ներքո:

Հեղինակը կատարել է նաև մի շատ գնահատելի աշխատանք՝ դիմելով Վազգեն Առաջինի մտերմությունը վայելած տարբեր մտավորականների, որ իրենց հուշերը գրեն կամ պատմեն երջանկահիշատակ Հայրապետի մասին:

Հատկանշական է, որ նրանցից յուրաքանչյուրը Հայոց Հայրապետի մասին խոսում է՝ ինչ-որ տեղ դիտարկելով իր մասնագիտական Ես-ի տեսանկյունից, որով մեկ անգամ ևս մեր առջև հառնում է իմաստուն ու բազմաշնորհ Հայրապետի լուսավոր կերպարը: Եթե նկարիչ Էդվարդ Իսաբեկյանը շեշտում է Վեհափառի՝ արվեստի նրբին իմացությունը, ապա տեխնիկական գիտությունների ներկայացուցիչ, 1980-ական թթ. Հայաստանի Նախարարների խորհրդի նախագահ Ֆաղեյ Մարգսյանն ընդգծում է ծերունազարդ Հայրապետի վերլուծական մտածողությունը, փաստերի համադրման և ճիշտ եզրահանգման հասնելու զարմանալի ունակությունը:

Սիլվա Սուքիասյանն անգամ դիմել է միջնորդավորված հուշագրությանը՝ Մարտիրոս Սարյանի խոսքը ներկայացնելով արվեստաբան Շահեն Խաչատրյանի պատմած հուշերով:

Գրքի երկրորդ բաժինը կազմում են Վազգեն Վեհափառի տարբեր առիթներով գրված մի շարք գրությունները, որոնք վերաբերվում են այլևայլ հարցերի: Վավերագրերի արժեք ունեցող այդ գրությունները գրքի հեղինակը ներկայացնում է համապատասխան մեկնաբանություններով և իրեն բնորոշ պատկերավոր ոճով:

Գրքի երրորդ մասում Ս. Սուքիասյանը զետեղել է Վազգեն Վեհափառի հետ տարբեր տարիներին վարած իր հարցազրույցները, որոնցում այնպիսի հետաքրքիր մանրամասնություններ կան մեր ազգային-եկեղեցական կյանքի այլևայլ հարցերի մասին, որ ժապավենին հանձնված այս խոսքերը ևս ինչ-որ տեղ ձեռք են բերում վավերագրերի արժեք:

Այս գիրքը, հեղինակի իսկ բնորոշմամբ, մի դափնեճյուղ է Վազգեն Առաջինի հիշատակին և մի գեղեցիկ օրինակ, թե ինչպես պետք է ջանալ մոռացումից փրկել և պատմությանն ի պահ տալ մեր ազգային մեծություններին վերաբերվող յուրաքանչյուր մասունք և դրվագ: